ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
05.05.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են՝ Մ.Գասպարյանը, Ն. Վարդանյանը ,Հ.Գրիգորյանը, Ա.Խլղաթյանը և Ե. Սահակյանը,Ն. Բաբայանը, Ա. Փանոսյանը:

Նիստը վարում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը:

Համայնքի ղեկավարի տեղակալ ***Վ. Չիլինգարյանի*** հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Շ.Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը,Պ.Գաբրելյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները վարձակալությամբ մրցութային կարգով տրամադրելու թույլտվություն տալու մասին :
2. Ռոբերտ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
3. «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ -8 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները վարձակալությամբ մրցութային կարգով տրամադրելու թույլտվություն տալու մասին :

/Զեկ. Բ.Բալբաբյան /

Առաջարկում եմ թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները վարձակալությամբ մրցութային կարգով հատկացնելու՝ համաձայն հավելվածի:

Հ/Հ	ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	ՄԱԿԵՐԵՍԸ ՀԱ /ծածկագիր/	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԸ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ
1	Չարենցավան համայնք Ալափարսի վարչական տարածք	0,65319 07-008-0278-0403	Պահուստային հողերի, արոտավայր	Վարձակալություն	5 000 ՀՀ դրամ
2	Չարենցավան համայնք Ալափարսի վարչական տարածք	1,00608 07-008-0201-0171	Գյուղատնտեսական, վարելահող	Վարձակալություն	15 000 ՀՀ դրամ

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 8 **դեմ - 0** **ձեռնպահ** -

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Ռոբերտ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 17-րդ կետով և հիմք ընդունելով«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 90 եզրակացությունը, ***առաջարկում եմ.*** Ռոբերտ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող 0,482547 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 07-008-0521-0004/ հողատարածքը՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտը, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքի:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին:

/Զեկ. Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերով՝ ***առաջարկում եմ.*** հաստատել «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Եփրեմյան Տարոն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Գասպարյան Անատոլի

Բաբայան Վալերի

Երիցյան Գագիկ

Դավթյան Կարեն

Պողոսյան Մնացական

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ